№ 86 ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 26
1909
ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ԿԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 26 № 86

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտարարում է, որ կիրակի, ապրիլի 26-ին, Կուսանաց ս. Ստեփաննոսի վանքում ս. պատարագից յետոյ, ժամը 12-ին, կատարվելու է դպրոցի հիմնադիր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ
մահվան տարեդարձի առիթով հոգեհանգիստ։
(շ. կ.) 354. 2—2

ԷՍՍԵՆՏՈՒԿԻ
(Կովկ. հանք. ջրեր)
ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Օրդուխանեանց
Ընդունում է հիւանդներ և այս սէզոնին, մասնաւորապէս ներքին հիւանդութիւններ. Գլավնայա Կուրսօվայա, տուն Կուրմօյաբօմների։
(օ. մ.) տռ. 319. 10—5

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՍԱՆԱՏՈՐԻԱ ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
(М. 129868)
Տես 4-րդ երեսի վրա։
տռ. 336. 1—1

ԽԱՆՈՒԹԸ ՓԱԿՎՈՒՄ Է ՄԱՅԻՍԻ 1-ԻՆ
ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ
Միանգամայն էժան գներով
ՄԻԱՅՆ 4 ՕՐ
Ապրիլ 27, 28, 29, 30-ին
ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ
ԵՂԲ. Ա. ԵՒ ԵԱ. ԱՂՃՎԱՆԳԻ
խանութում, Գօլօվինսկի պրօսպէկտի վրա
ՄԵՏԱՔՍԵԱՅ ԵՒ ԲԱՏԻՍՏԻ ԲԼՈՒԶԿԱՆԵՐԻ, ՊԵՆԻՒԱՐՆԵՐԻ, ՄԱՏԻՆԷԻ, ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ, ՍԱԼՕՊՆԵՐԻ, ԿԱՊՕՐՆԵՐԻ, ԳՕՏԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Զեղչված գներից դուրս՝ նորից զեղչ
25%
Բոլոր մնացորդ ապրանքների համար, այն է՝ տղամարդկանց, կանանց և երեխաների սպիտակեղէն, քաթանեղէն, սեղանատան սպիտակեղէն, գուլպաներ և այլն
Զեղչված գներից դուրս՝ նորից զեղչ
15%
128. 0—11

ՅՕԳՈՒՏ ՀԱՅՈՒՀԵԱՑ ՈՐԲԱԽՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Կիրակի, ապրիլի 26-ին
ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՐՏԷԶՈՒՄ
(Միքայէլեան փողոց)
Տեղի կունենայ
ՄԵԾ ԶԲՕՍԱՆՔ
ԾՐԱԳԻՐ.—Մանկական խաղեր, սինեմատօգրաֆ, յայտնի խիրօմանտ ԺՕՐԺ-ԺԱՆՏ, օղակի խաղ, բաղդի տակառ, կօնֆէտի, ծաղիկներ և բուֆէտ, երեխայական խմբերգեր։
ՊԱՐԵՐ
Նորին Մեծութեան Կովկասի Փոխարքայի թիկնապահ գնդի ԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲԸ ժամը 7—9-ը կը կատարէ մի քանի հետաքրքրական երգեր և պարեր (խենջալներով և այլն)։
Երկու զինւորական երաժշտախումբ։
Զբօսանքի սկիզբը ժամը 4-ից։ Մուտքը մեծերի համար 30 կ., փոքրերի համար 20 կ.։
(շ. կ.) տռ. 325. 3—3

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Այսօր, ապրիլի 26-ին, Ժողովրդական Համալսարանում տեղի կունենայ հանդէս Գօգօլի ծննդեան 100-ամեակի առիթով։
Կը կարդացվեն
ԵՐԿՈՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ
Պ. Գելէյշվիլի վրացերէն, իսկ պ. Պ. Զաքարեան հայերէն կը դասախօսեն «Գօգօլի կենսագրութիւնը» թէմայով։ Պ. պ. Սյարօվ և *** զգեստաւորված և գրիմով՝ կը կարդան դեկլամացիաներ Գօգօլի հեղինակութիւններից։
Առաջին դասախօս. սկիզբն է առաւ. ժամը 10-ին, իսկ երկրորդինը՝ $12^{1}/_{2}$-ին։ Դասախօսութիւններից մէկին ու մէկի համար տոմսակ գնողը իրաւունք ունի լսելու և դեկլամացիան։
Իւրաքանչիւր դասախօս. մուտքի վճարն է 5 և 10 կոպ.։
(տռ.) 356. 1—1

Կիրակի, ապրիլի 26-ին
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿ. ԱՅԳՈՒՄ
(Միքայէլեան փ., Վեացելի հիւրանոցին կից)
կը կայանայ
ՀՍԿԱՅԱԿԱՆ ԶԲՕՍԱՆՔ
Յօգուտ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԾՐԱԳԻՐ.—Բոլոր տոմսերը տանող վիճակախաղ, կովկասեան ժողովրդական երգեր, կովկասեան բնորոշ պարեր ազգային շորերով, ԿԱՆԱՆՑ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԳՕՏԵ-ՄԱՐՏ (առաջին անգամ Թիֆլիսում) և ատլետական և մարմնամարզական վարժութիւններ, Ջան-գիւլում, Նուագախմբի համերգ, սինեմատօգրաֆ (ի միջի այլոց նաև Վեհ. Հայրիկի թաղումը), բէբուս մրցանակով, պտի-շվօ, նշանառութիւն, օղակախաղ։
Երաժշտական զինւորական երկու նուագախումբ.
Մուտքի տոմսակներով վիճակախաղ կը ձգվի մի թանգագին իր։
Սկիզբն է ցեր. ժամը 4-ին։
Մուտքը՝ մեծերի համար 30 կ., երեխաների և աշակերտների համար 20 կ.։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ!
Ի նկատի ունենալով, որ մինչև այժմ շարունակում են կեղծել մեր էտիկէտները, որպէսզի սպառեն իրանց աւելի վատ ապրանքը, գործադրելով արկղիկների և կապոցների միատեսակ ներկն ու մարկան, փոխանակ բոլորին յայտնի
ԲԱՐՁՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՍԻՄՊԱՏԻԱ 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
№ 8 10 ՀԱՏԸ 5 ԿՈՊ.
Ինչպէս նաև մեր ֆիրմայի ուրիշ գլանակներ, մեր պ. պ. գնողներին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՐԿԱՅԻՆ և ազգանունին
Ն. Ի. ԲՕԶԱՐՋԵԱՆՑ ԵՒ ՈՐԴԻՔ
(հ. կ.) 243. 10—10

ՖՐԸԳՐԻՑ ԴՈՒՐՍ
ԹԱՏՐՕՆ ՄՈՒԼԷՆ-ԷԼԵՔՏՐԻԿ
Միխայլօվսկի պր., Ինկէրների դպրոցի դիմաց
Այսօր առաջին անգամ բեմ դուրս կը գայ ՍՈՒԼՈՂՆԵՐԻ ԹԱԳԱՒՈՐ, աննման ԿՕՄԻԿ-ԻՄՄԻՏԱՏՕՐ և ՊԱՐՕՂ
ՆԵԳՐ պարոն ԱԼՖՐԵԴԻՍԸ
Պարոն Ալֆրեդիսը դուրս կը գայ 4-րդ բաժանմունքում և իր դերակատարութեամբ հասարակութեանը կը պատճառէ բաւական հաճոյք։ Ամեն տեղ ունեցել է նա մեծ աջողութիւն։
✦ Տեղերի գները սովորական են։ ✦ Սկիզբը ցերեկ. ժամը 5-ից։ ✦
Հասարակութեան յարմարութեան համար կասսան բաց կը լինի ցեր. ժամը 4-ից։
Վաղը նոր պատկերներ։ Վաղը պ. Ալֆրեդիսի II դեբիւտն է։
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ՖՐԸԳՐԻՑ ԴՈՒՐՍ
(տռ.) 360. 1—1

Արտիստական Ընկերութեան թատրոն
Հինգշաբթի, ապրիլի 30-ին կը լինի միայն մի
ՀԱՄԵՐԳ
Հռչակաւոր երգչուհի
[illegible]
ՎԵԱԼՑԵՎԱԻ
Մասնակցութեամբ Արմանդօ Ցանիրօնի (ջութակահար), Ա. Ի. Կրեշկևիչի (տէնոր) և Ա. Ե. Բօբրօվի (բարիտօն), դաշնակահար Ա. Վ. Տասկինի ակօմպանիմենտով։
Սկիզբը երեկոյեան ուղիղ $8^{1}/_{2}$ ժամին։
Տոմսակները կարելի է ստանալ Միրիմանեանի երաժշտական դէպօյում, իսկ համերգի օրը, երեկոյեան 8-ը ժամից՝ թատրոնի կասսայում։
(19, 26, 30) 327. 3—2

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԲԱՅԼԵՐ

Թիւրքիայում և Պարսկաստանում հայ տարրի դրութիւնը շատ ծանր էր վերջին ամիսներում։

Քաղաքական և հասարակական հոսանքները իրանց դարուածներով յաճախ անդրադառնում էին հայի վրա և վերցնում նրանից զոհեր. նրանք սպառնում են նոյնը կրկնել և ապագայում։

Հայը փոքրամասնութիւն է կազմում այդ երկիրներում և շրջապատուած է ֆանատիկոս և անկուլտուրական տարրերով, որոնք շատ յաճախ ընդհանուր հասարակական շարժումները ըմբռնում են ցեղական և կրօնական խտրութիւնների իմաստով, ուստի և իւրացնում են այնպիսի վերաբերմունք, որ վերջանում է ջարդերով, կողոպուտներով, աւերումներով։

Հայը, իբրև երկրի ազգաբնակութեան մի բաղկացուցիչ զանգուածը, անշուշտ, անմասն չէ մնում այն հոսանքների մէջ, որոնք յայտնվում և զարգանում են երկրի մէջ։ Հայկական շրջանում սկսում են երևան գալ կուսակցութիւններ և համախմբումներ՝ սկսած աւանդապաշտ պահպանողականներից մինչև ամենածայրայեղ արմատականները։

Եւ կարելի էր կարծել, որ իւրաքանչիւր քաղաքական կամ հասարակական ծրագրի և գործողութիւնների համար պատասխանատու պէտք է ճանաչվեն միայն այն համախմբումները և անձնաւորութիւնները, որոնք մշակել են այդ ծրագիրը կամ յարել են նրան։ Բայց իրականութեան մէջ մենք դժբաղդաբար տեսնում ենք, թէ ինչպէս տգէտ ամբոխը իր թիւր հասկացողութեամբ ամեն մի՝ իր համար անախորժ՝ գործողութիւն վերագրում է ոչ այս կամ այն մասնաւոր համախմբին կամ հասարակական շերտին, այլ ամբողջ ցեղին և կրօնական համայնքին, ուստի և կռիւ է յայտարարում այդ ցեղին, կոտորելով և ջարդելով ամեն մի անհատի, որ պատկանում է այդ ցեղին։ Եւ վերջ ի վերջոյ դուրս է գալիս, որ փոքրիկ ցեղական տարրը միշտ էլ մեղաւոր է, որովհետև տիրող ազգի մի մասը դժգոհ է նրանից՝ թէ ինչու վերջինս բաւականաչափ պահպանողական չէ, միւսը՝ թէ ինչու սա բաւականաչափ ազատամիտ և մաքառող չէ և այլն։ Եւ որովհետև մասնաւոր համախմբումների արածները հեշտութեամբ վերագրվում են ամբողջ ցեղին, ուստի և հասկանալի է՝ թէ ինչ տխուր դրութիւններ են ստեղծվում իրականութեան մէջ։

Այդ հանգամանքը, անտարակոյս, պէտք է թելադրէ փոքրիկ ազգերի գործողներին շրջահայեաց լինել իրանց գործողութիւնների մէջ և հաշուի առնել այն կրկնակի զոհերը, որ պէտք է տան նրանք անցողական շրջաններին և բարբարոսականութեան արտայայտութիւններին թէ իբրև ընդհանուր քաղաքացիներ և թէ իբրև մի որոշ ազգի կամ ցեղի պատկանող անձնաւորութիւններ։

Նախ և առաջ պէտք է տարածել այն գաղափարը, որ պատասխանատւութեան ծանրութիւնը չը պէտք է բարձել ամբողջ ազգի վրա և չը պէտք է դարձնել վերջինին իբրև մշտական առարկայ դժգոհութիւնների և վրէժների արտայայտութեան համար։ Իսկ երկրորդ՝ անհրաժեշտ է, որ մեծ կորուստների և արհաւիրքների վտանգը թելադրէ մարդկանց կշռել այն գործողութիւնների հետևանքը, որոնց նրանք ձեռնարկում են։

Յաճախ մենք տեսնում ենք, որ նոյնիսկ խոշոր պետութիւնները քաշվում են ներգործական դիրք բռնելուց Թիւրքիայի և Պարսկաստանի վերաբերմամբ, երբ յարմարութիւններ չունեն միջամտելու գործերի մէջ և ազդելու նրանց ընթացքի վրա։ Իսկ փոքրիկ, թոյլ, անպաշտպան ազգերի համար աւելի ևս մեծ են դժուարութիւնները և աւելի սպառնական՝ անաջողութեան հետևանքները։

Այնպիսի մի փոքրիկ ազգ, ինչպէս հայն է, գտնվում է ողբերգական վիճակի մէջ։ Նա, ունենալով ինտելիգենցիայի մի որոշ թիւ, ճաշակած լինելով դպրոցական կրթութեան բարիքները մի որոշ չափով, լինելով համեմատաբար աւելի կուլտուրական քան շրջապատող տարրերը, անշուշտ, տարբերվելու է մի որոշ ժամանակ այդ տարրերից, ճանաչվելու է իբրև խորթ զաւակ, իբրև այդպիսին, մի յայտնի ատիճանով զրկանքների է ենթարկվելու. բայց այդ հանգամանքը թելադրում է հրամայողաբար, որ հայ գործողները ոչ միայն անտես չառնեն այն միջավայրը, որտեղ նրանք գործում են, այլ և ամեն միջոց գործ դնեն առաջն առնելու այնպիսի թիւրիմացութիւնների, որոնցից վնասվում է ամբողջ ազգը, տալով անմեղ զոհեր սարսափելի քանակութեամբ և կորցնելով իր կուլտուրական աշխատանքի արգասիքները։

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Թեհրան, 24 ապրիլ

Երէկ քաղաքի միջով անցաւ պարսից կօզակ-գեներալը, որին շահը ուղարկում է ողջունել ռուսաց զօրամասի հրամանատարին և շնորհաւորել Թագուհի Կայսրուհու անուանակոչութեան առիթով։ (Հ. Գ.)

Թաւրիզ, 24 ապրիլ

Սահմանադրութիւն շնորհվելու առիթով քաղաքը հրավառութեան մէջ է։ Չը նայած երկար կուից յետոյ ձեռք բերված նպատակին, ֆէդայիները զէնքերը վայր չը դրին և առաջվայ նման իրապէս իշխանութիւնը նրանց ձեռքումն է։ Անջումանը զէնքերը յանձնելը արգելեց մինչև Թեհրանում պարլամենտի գումարումը և եռանդով բանակցութիւններ է վարում Րաշտի, Մէշէդի և Սպահանի անջումանների հետ։ (Հ. Գ.)

Լօնդօն, 24 ապրիլ

Րէյտերին հաղորդում են Թեհրանից, որ այսօր անգլիական միսիայում տեղի ունեցաւ մի նիստ. ներկայ էին շահի պատգամաւորները, Անգլիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները։ Վերջինները, շահի ցանկութեան համաձայն, բացատրութիւն տուին ապրիլի 9-ին ներկայացված ծրագրի վերաբերութեամբ և յայտնեցին, որ շահի մերժումը կը համարվի իբրև մերժում ամբողջ ծրագրի։ (Հ. Գ.)

Թեհրան, 24 ապրիլ

Ֆէդայիները շարժվեցին Կէյվենդի կողմը, որ Ղազվինից դէպի Թեհրան առաջին կայարանն է։ Գիշերս Կերէջու կամուրջը պաշտպանելու համար ուղարկվեց շահի կօզակային մի բրիգադա։

Մայրաքաղաքի ազգաբնակութիւնը, դժգոհ շահի վերջին հրովարտակի անորոշութիւնից, սկսում է յուզվել։ (Հ. Գ.)

Լօնդօն, 24 ապրիլ

Րէյտերին հեռագրում են Թեհրանից ապրիլի 23-ից, որ պարսիկ մի հարիւրեակ կօզակ երկու գնդակացիրներով երէկ ուղարկվեց Կերէջի կամուրջի պաշտպանութեան համար ընդդէմ Ղազվինից եկող Նացիօնալիստների։

«Թայմս» Թեհրանից ստացած տեղեկութիւնների համաձայն, Րաշտի ռուս հիւպատոսին յանձնարարված է բացատրութիւն պահանջել սիփէհդարից, որ, ինչպէս կարծում են, կանգնած է Գիլանի ազգային շարժման գլուխ, և յայտնել նրան, որ ռուսաց կառավարութիւնը ստիպված կը լինի քայլեր անել, եթէ յեղափոխականները յետ չը կանչվեն։ Ռուսները հնարաւոր են գտնում մեծ զօրախումբ ուղարկել՝ Թեհրանը և կասպիական ճանապարհը պաշտպանելու համար։ (Հ. Գ.)

Ուրմիա, 25 ապրիլ (մինչև Ջուլֆա սուրհանդակով)

Սալմաստից հաղորդում են, որ սամաջեան քրդերը, որոնք աջակցում են Պիշնամազին Գինէյի վիճակում, կողոպտել են վիճակի ամբողջ գիւղերը։ Պարսից ֆէդայիների մեծ մասը հետևել են նրանց օրինակին։ Եղել են բռնութեան դէպքեր. ազգաբնակութիւնը ցրվում է։ Քիւրդերը Գինէյից հեռանալուց յետոյ, ֆէդայիները նոյնպէս աստիճանաբար սկսեցին ցրվել, տանելով կողոպտածը։ Քօհնէշահարը վերջնականապէս անձնատուր եղաւ յեղափոխականներին և 100 ձիաւորներ ուղարկեց Պիշնամազին օգնելու։ Րահիմ-խանի որդին այս օրերս մեծ քանակութեամբ ձիաւորներով յարձակվել է Պիշնամազի վրա, յետ վերցրել նրա գրաւած գիւղերը և պաշարել նրան Կասուդ գիւղում։ Նրա դրութիւնը կրիտիքական է։ (Հ. Գ.)

—

Բագուի պարսկական գաղութը ապրիլի 23-ին, արտաքին գործերի մինիստրի միջոցով, պարսից շահին ուղարկել է հետևեալ հեռագիրը.

«Իրերի ներկայ դրութիւնը և Ատրպատականի շրջանում կատարվող վերջին անցքերը պահանջում են, որպէսզի ձերդ մեծութիւնը, որ կոչված էք կայսրութիւնը և ազգը պահպանելու համար, թոյլ չը տայ ազգի գերութիւնը և կայսրութեան անկումը։ Անհրաժեշտ է սահմանադրութիւն շնորհել Պարսկաստանի ապագան պահպանելու համար և ձերդ կայսերական մեծութեան ծննդեան տարեդարձի օրը դուք վերադարձրէք նրան ժողովրդին։ Այժմ մենք յոյս ունենք, որ հայրենիքը կը փրկվի»։

Շահը հեռագրով տեղեկացրել է Սաթթար խանին, որ, իր ծննդեան տարելիցի օրվայ առիթով, նա սահմանադրութիւն է շնորհում և յայտարարում է լիակատար քաղաքական ներումն, ուստի առաջարկում է զէնքը վայր դնել և քաղաք ներս թողնել Էյն-ուդ-Դօվլէին։

Սաթթար-խանը պատասխանել է հաւատարիմ հպատակների շնորհակալութեամբ, համաձայնութիւն յայտնելով զէնքը վայր դնել, բայց քաղաք ներս թողնել Էյն-ուդ-Դօվլէին անհնարին է համարում մինչև մէջլիսի որոշումը։

Սաթթար խանի բնակարանի ու դիրքերի վրա իսկոյն և եթ պարզվել են ազգային դրօշակները։

Սահմանադրութիւն շնորհելու մասին պաշտօնական տեղեկութիւն ստանալուն պէս, բազմամարդ միտինգ է գումարվել, ուր, ի միջի այլոց, խօսել է Սաթթար-խանը, ընդգծելով որ, շահի հետ միանալուց յետոյ, պարսիկ ժողովրդի համար այլևս սարսափելի չեն ոչ ներքին և ոչ էլ արտաքին թշնամիները։

Սաթթար-խանը եղբայրական ողջոյն է ուղարկել Էյն-ուդ-Դօվլէին շահի ծննդեան տարելիցի ու սահմանադրութիւն շնորհվելու առիթով, յոյս յայտնելով շուտով տեսնվելու նրա հետ սահմանադրական Թեհրանում։ Դրա հետ միաժամանակ Սաթթար-խանը հարց է տուել, թէ երբ է նա հեռանալու Թաւրիզի մօտից։

Էյն-ուդ-Դօվլէն պատասխանել է նոյնպիսի բովանդակութեամբ, ուրախութիւն յայտնելով որ այդ բերկրալի օրը ընդմիշտ կամրացնէ շահի ու ժողովրդի մէջև եղած կապը։

Թաւրիզի մօտից հեռանալու հարցի առիթով Էյն-ու-Դօվլէն պատասխանել է, որ շահից հրաման ստանալուն պէս իսկոյն նեթ կը թողնի իր դիրքերը։

Ժամանակաւոր զինւորական մինիստրը հեռագրով առաջարկել է Սաթթար-խանին Թեհրան գնալ մասնակցելու նոր կաբինէտի աշխատանքներին պարլամենտ հրաւիրելու մասին, աւելացնելով որ այդ առաջարկը բղխում է շահից։

Սաթթար-խանը պատասխանել է, որ մինչև պարլամենտի գումարվելը կարող է առ այժմ գործել շահի վստահութիւնը վայելող մինիստրութիւնը, իսկ նոր կաբինէտի [illegible] թողնել պարլամենտի գումարումից յետոյ. Թաւրիզը թողնել նա չէ կարող, որովհետև իր ներկայութիւնը այնտեղ կարևոր է։ Որքան շուտով գումարվի պարլամենտը, այնքան շուտ կը վերականգնվի երկրի հարստութիւնը։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Կ. Պօլիս, 24 ապրիլ

Պատգամաւորների պալատը և պատերազմական դատարանները տօնի պատճառով չը գործեցին ոչ երէկ, ոչ այսօր։ Առ այժմ մահվան պատժի են ենթարկվել 24, աքսորվել են Սալոնիկ և [illegible] 600 էն [illegible] մարդ։

Երեկոյեան լրագիրները տպել են Ադանայի, Անտիօքի շրջակայքի և Սիրիայի միւս տեղերի կոտորածների նկարագրութիւնը, որ ապշութիւն է պատճառում իր սոսկալի մանրամասնութիւններով։ Լրագիրների հաշւով՝ սպանվել են 35,000-ից աւելի մարդ, հրդեհվել են մի քանի տասնեակ գիւղեր։ Ադանան բոլորովին այրվել է։ Մէրսինը փրկվեց միայն օտարազգի յածանաւերի գալստեամբ։ (Հ. Գ.)

—

Կ. Պօլիս.—Պարլամենտի անդամների շրջանում կազմվել է ռամկավարական միութիւն, որի պարագլուխն է Իբրահիմ-բէյը։

Վիեննա.—Լուրեր են պտտում տիեզերական պատրիարքի կալանաւորութեան մասին, որը սաստիկ վարկաբեկված է և Մակեդօնիայի յունական հոգևորականութեան կողմից մատնված։

Ալեքսանդրիա.—Ամենայն օր շոգենաւը բերում է Բօսֆօրից ու Զմիւռնիայից մարտի 31-ի զինւորական ապստամբութեան ղեկավարներին ու պարագլուխներին։ Րէակցիօնները, ըստ երևոյթին, Եգիպտոսն ուզում են դարձնել իրանց գործունէութեան համար կենտրոնատեղի, որպէսզի այնտեղից ղեկավարեն փոքր ասիական նահանգներում սկսված շարժումը։

Եաֆֆա.—Մի քանի նահանգների ադմինիստրացիան հարկադրված էր մի առ ժամանակ թաքցնել Աբդիւլ-Համիդի գահընկէցութիւնը՝ երկիւղ կրելով տեղական ազգաբնակութեան մոլեռանդութիւնը գրգռելուց։

Վիեննա.—Բեռլինից հաղորդում են, որ ամբողջ Անատօլուի շրջանում ապստամբութիւն է, մանաւանդ սաստկանում են անկարգութիւնները Բիթլիսում և Դիարբէքիրում։ Եթէ կենտրոնական կառավարութիւնը վճռական միջոցներ ձեռք չառնէ, դէպքերը արձագանք կը գտնեն նաև մայրաքաղաքում։

Բէյրութ.—Վերջին օրերս Փոքր-Ասիայից եկած փախստականների մէջև նկատվում է շարժումն գաղթելու Եւրոպական Թիւրքիա երիտասարդ-Թիւրքերի պաշտպանութեան ներքոյ, որովհետև տեղական մահմեդականների տրամադրութիւնը մեծամեծ վտանգներ է սպառնում։

Կ. Պօլիս.—Լուրերի համաձայն, Փոքր-Ասիայի մահմեդականների մոլեռանդ շարժումը կազմակերպված է Կ. Պօլսից փախած Բիւրհան-Էդդին արքայազնի ձեռքով, որը արդէն ոտքի է հանել րէակցիօն տարրերը։ Անգօրայում, Ալէյում և Բաղդադում մահմեդական հոգևորականութիւնը կանաչ դրօշակ է բարձրացրել երիտասարդ-Թիւրքերի դէմ։ Մէքքայում պատրաստութիւններ են տեսնվում Բիւրհան-Էդդինին սուլթան հրատարակելու։ («Г. М.»)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փարիզ, 24 ապրիլ

Պօստային՝ պաշտօնեաների պատգամաւորութիւնը ներկայացաւ ներքին գործերի մինիստրին։ Կլէմանսօն հիւանդութեան պատճառով բացակայում էր։ Պատգամաւորութեանը չընդունեցին։ Սառրին պօստային ծառայողների սինդիկատի քարտուղարը, որ անցել էր պատգամաւորութեան գլուխ, արձակվեց պաշտօնից՝ առաւօտեան ծառայութեան չը գալուն համար։ Պաշտօնեաները դռնփակ նիստ գումարեցին և որոշեցին գործադուլ անել։

Հեռագրական ցրիչները և կենտրոնական հեռագրատան ծառայողները որոշեցին սկզբունքով միանալ գործադուլին, կոմիտէտին թողնելով որոշել աշխատանքները դադարեցնելու րօպէն։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգից հեռագրում են, որ տեղական լրագիրները լի են յօդուածներով և լուրերով մինիստրական կաբինէտի ճգնաժամի մասին։ Խօսում են, որ մինիստրների խորհուրդը, մեծամասնութեամբ ընդդէմ Կրիվօշէինի, Սուխօմլինօվի և Վօէվօդսկու, որոշել է պնդել, որ հաստատվի ծովային շտաբի կազմը և, աջողութիւն չունենալու դէպքում, հրաժարական տալ։

Լաւատեղեակ անձինք վկայում են, որ Ստօլիպինի, Կօկօվցեվի ու Տիմիրեազևի հրաժարականը անխուսափելի է։

Օդեսսայի քաղաքապետ գեն. Տօլմաչեվի պաշտօնից հեռանալը հաստատվում է։ Նա նշանակվում է Պետական Խորհրդի անդամ։ («Б.»)

Պետերբուրգ, 24 ապրիլ

Պետական Դուման իր 100-րդ նիստում ընդունեց կառավարական ագրարային օրինագիծը։ (Հ. Գ.)

—

«Каспій» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ, ի նկատի առնելով ինքնասպանութիւնների շատանալը և համաճարակի բնաւորութիւն ստանալը, դատախազական իշխանութիւնը հրամայել է ոստիկանութեանը արձանագրութիւններ կազմել պատասխանատուութեան ենթարկելու այն անձանց, որոնք ինքնասպանութեան փորձ են անում, բայց մնում են ողջ։

—

Պետական Դումայի պաշտօնական աղբիւրների համաձայն, մայիսի վերջում տեղի են ունենալու մի շարք տեսակցութիւններ Շվէդիայի, Իտալիայի, Անգլիայի, Գերմանիայի և Սպանիայի միապետների մէջև։

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 6 ապրիլ

Քաղաքական հորիզոնը նորից մթագնել է. րէակցիան երևի նորից գլուխ է վերցրել. գէթ այսպէս են ենթադրել տալիս Կ. Պօլսից և Երզնկայից ստացված հեռագիրները։ Ինչ-որ ծանր դէպքեր են պատահել մայրաքաղաքում։

Հեռագրական կարճ լուրերից վճռակի եզրակացութեան չենք կարող հասնել, բայց ժամանակը կրիտիքական է թւում. Թիւրքերը ուրախացել են, որ երկրում տիրելու են «շէրիաթ»—իսլամի օրէնքը, որը ըստ նրանց կարծիքին միայն կարող է բարեբաստութիւն, խաղաղութիւն տալ իսլամական աշխարհին, երբ քրիստոնեաները պէտք է գտնվեն միայն իրանց ռայեայի դերի մէջ։

Մինչդեռ Կ. Պօլսից ապահովիչ լուրեր են ստացվում, որ խաղաղութիւն է տիրել երևի. ժողովը շարունակում է իր նիստերը, երևի սահմանադրութիւնը շէրիաթով կարկատելու խոստումով, Երզնկայից ընդհակառակն սենսացիօն լուրեր են առնվում. Դ. զօրաբանակը չէ ընդունում Թէվֆիկ փաշայի ապօրէն դահլիճը և պահանջել է բացատրութիւն, սահմանադրութեան ճիշդ գործադրութեամբ, իսկ հակառակ պարագային սպառնում է քալել Կ. Պօլսի վրա։ Վանում ևս ամսիս 4-ին գումարվեց մի միտինգ ու հեռագրով պահանջվեց սահմանադրութեան պահպանումը և ճիշդ գործադրութիւնը. երեւում է, որ դեռ «սկիզբն է երկանց». մութ ոյժեր են գործում և անակնկալներ է սպասվում։

Գարունը եկել է և իր հետ բերել նոր դարդեր, նոր ցաւեր։ Ահա հարաւից քաղաքս են խուժում [illegible] Նորդուզցիներ, իսկ հիւսիսից մանդանցիներ, նրանց մէջ ևս խաւար ոյժեր գործում են։ Բռնութեան, ալան-թալանի ևս ուրուականը տիրում է։

Յայտնի աւազակապետ Շաքիրի ղեկավարութեամբ, նրա հօրեղբօր որդիներից Մեհմէդ, Կադըր ու Ջանվար կազմել են մի հրոսակախումբ, բաղկացած 40 ձիաւորներից, և աւարում ու աւերում են Նորդուզի, Շատախի ու Հայոց-Ձորի գաւառները։ Մտնում են մի որևէ գիւղում, մի քանի օր նստում, 40 մարդիկ իրանց ձիերով կերակրվում են և իբրև «գէշ-քիրասի» մի գումար, կամ ոչխար, իւղեղէններ և կամ անասուններ առնում և ապա հեռանում են, պատուիրելով խստիւ լռութիւն պահել։ Եւ խեղճ գիւղացիներ տալիս են ու լռում. լռում են, որովհետև բողոքը աւելի վատ հետևանքներ առաջ կը բերէ։

Նոյն գաւառի Կանգվարի գիւղացիները միայն համարձակութիւն են ունեցել գալու Վան ու բողոքելու. և եթէ հետևանք չունենայ, էլ չեն կարող վերադառնալ իրանց գիւղը, ու նրանք էլ պիտի գաղթեն, ինչպէս որ մի քանի տարուց ի վեր Նորդուզցիների մեծագոյն մասը գաղթել է՝ իր հողերը թողնելով Շաքիրին ու նմաններին. իրանք Արտաշի դաշտում նոր գիւղեր են շինել և մրիբայութիւն են անում Հայդեբանլը Մեհմէդ բէկին։ Կառավարութիւնը զօրք է ուղարկել, ձերբակալելու յիշեալ հրոսախումբը. եթէ նրանք էլ չարժանանան նոյն բաղդին, ինչ որ պատահեց նրանց նախորդին, որովհետև անցեալ աշնան էլ կառավարութիւնը զօրք ու ոստիկաններ ուղարկեց պատժելու յիշեալ հրոսակապետներին, սակայն յիւզպաշէ և երկու ոստիկաններ զոհ տալով՝ հեռացան։

Իսկ Մանդան հայ գիւղում 30 տուն քիւրդերով բնակվում է 13 տարիներից ի վեր մարդակերպ մի ճիւաղ՝ Սայիդ բէկ անունով։ Սա անթիւ զրկանքներ, աննկարագրելի չարիքներ է հասցրել մանդանցի հայերին, գրաւելով նրանց թէ հողերը, թէ ստացուածքը, թէ պատիւը և թէ ամեն մի մարդկային ազատութիւն. շատերը արդէն թողել փախել են, իսկ մնացողները փարաւոնների գերութեան են ժառանգվել։ Դեռ անցեալ տարի էր, նրանցից 17 մարդկանց նա զրպարտութեամբ վեց ամսից աւելի նստեցրեց բանտում, ինքնաբերաբար ոստիկանութեան դեր կատարելով և հայերի տները խուզարկել տալով, իբր թէ նրանց տներում գտել էր Թիւրքերէն արգելված թերթ, որը արտասահմանի իր քիւրդ ազգակիցները իրան էին ուղարկել, որովհետև այդ ճիւաղը յայտնի քիւրդ Խան Մահմուդի ցեղից է։

Այս տարի հայերը պահանջել են, որ նա հեռանայ իրանց գիւղից. բողոք են տուել կառավարութեան, բայց Սայիդ բէկը կառավարութեան հրաւիրակ ոստիկաններին ծեծել ու վերադարձնելուց յետոյ՝ հայերին ևս սաստիկ ծեծում է. նրանցից մի քանիսին մարդկային աղբ է ուտեցնում և ապա բոլորը միասին դուրս է քշում գիւղից, որոնք գտնվում են այժմ Արճակ գիւղում։ Հետաքրքրական է թէ ինչ կերպով պատժելու է կառավարութիւնն այս հրէշին։

Մարակ

ՀԱՅԵՐԻ ՋԱՐԴԸ

«Բեռլին. Տագեբլատտ» լրագիրը մի ականատեսի պատմածների հիման վրա հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում հայերի ջարդի մասին Ադանայում։

Թղթակցի ասելով, ջարդը նախատեսվում էր դեռ ևս առաջուց. հայերի և մահմեդականների մէջև վաղեմի թշնամութիւն էր տիրում։ Նոր կառավարութիւնը զէնքեր վաճառելը թոյլատրեց, որի շնորհիւ մաքսատան միջոցով բերել տուեցին տասնեակ հազար ատրճանակներ ու հրացաններ։ Հայերը պարծենում էին, որ իրանք զինված են շատ լաւ։

«Ապրիլի 1-ին,—գրում է թղթակիցը,—ես վերադարձայ Ադանայից, որը ամբողջապէս լցված էր քիւրդերով։ Ինձ թոյլ տուին առանց որևէ արգելքների և, երբ ճեղքելով անցնում էի դէպի կայարան, ականատես եղայ հայերի ջարդին։ Ճանապարհին ընկած էին 14 դիակներ։ Հազիւ էի հասել կայարանին, երբ սկսվեց գնդակաձգութիւնը, լսվեցին աղաղակներ ու ռումբերի պայթիւններ։ Մեր մօտից անվերջ շարանով անցնում էին ֆելլահներ՝ կողոպտված իրերով։

«Յաջորդ օրը ջարդը վերսկսվեց։ Սկսվեցին հրդեհումներն ու թալանումները քաղաքի առևտրական մասում։ Շարժումը բացառապէս ուղղված էր հայերի դէմ։

«Անգլիական հիւպատոսը անձամբ փորձեց վերականգնել կարգը, սակայն վիրաւորվեց հայկական մի տնից արձակված գնդակով։ Դրութիւնը աւելի ևս կրիտիկական դարձաւ. զօրքերը ոչ մի գործունէութիւն չէին ցոյց տալիս։ Մեզանից 4 մղոն հեռու գտնվող Տարսոն քաղաքի հայկական թաղը ամբողջապէս գտնվում էր բոցերի մէջ։ Ջարդերը Տարսոնում, Ադանայում և Մերսինում տևեցին երեք օր։ Վերջապէս եկաւ Թիւրքական ռազմանաւը, ափ իջեցնելով 100 հոգուց բաղկացած կանոնաւոր մի զօրամաս։ Մենք տեղեկութիւններ ստացանք, որ սարսափելի ջարդերի են ենթարկվել Ալէքսանդրետտը, Մօրաշը, (Մարաղը), Սիսը, Օսմանիէն, Համիդիէն և Բաղչէն։ Կասկածից դուրս է, որ ջարդը նախամտածված ու կազմակերպված էր Թիւրքական րէակցիօներների ձեռքով։ Բոլոր մահմեդականները ջարդի ժամանակ յատուկ նշաններ էին կրում։ Սպանվածների ճիշդ թիւը դժուար է որոշել. միայն Ադանայում անցնում է 5,000-ից, իսկ ամբողջ վիլայէթում 15,000-ից»։

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Միւֆիդ-բէյ, քարտուղարը, կարդում է Ազգային Ժողովի մի շրջաբերական-հեռագիրը Ադանայի և այլ վիլայէթների վշտալի դէպքերի առիթով։

Հեռագիրը գուժում է այդ դէպքերը և խնդրում է իշխանութիւններից խիստ միջոցներ ձեռք առնել կարգը վերահաստատելու համար։

Էբուզիա Թէվֆիկ-բէյ նկատում է, որ հեռագիրը շատ թոյլ լեզուով է գրված։ Դա Բ. Դռան ոճն է։ Պէտք է այդ մարդիկը գիտենան, որ պատասխան են տալու իրանց գլխով։

Ալի-Զէնանի էֆէնդին ասում է, որ պէտք է հասկացնել տալ այդ մարդկանցը, որ կը պատժվեն։

Ահմէդ-Րիզա-բէյ նկատում է, որ այդ տեսակ հեռագիրները պէտք է գրված լինեն չափաւոր լեզուով, մանաւանդ որ ազգաբնակութիւնը չափազանց յուզված է։

Բժիշկ Տաղաւարեան նկատում է, որ դա տարածվում է Սիվասում։

Ահմէդ-Րիզա-բէյ յիշեցնում է, որ Ազգային Ժողովի հեռագրի նախագիծը խմբագրվել է Թալաաթ-բէյի և մի քանի հայ պատգամաւորների ներկայացրած առաջարկութեան հիման վրա։

Սաիդ-փաշան ասում է, որ այդ տեսակ գրութիւնները պէտք է հաւասարակշռված լինեն։ Սակայն նա ընդունում է, որ բնագրի նախագիծը կարելի է փոխել և առաջարկում է մի յանձնաժողովի յանձնել խմբագրելու այդ բանը։

Պօյաճեան էֆէնդին առաջարկում է ընդգծել յանցաւորներին պատժելու վերաբերեալ հատուածը։

Ազգային Ժողովն ընդունում է յանձնել բնագիրը մի յանձնաժողովի, բաղկացած սէնատոր Էքրէմ-բէյից և Մուսաքեազիմ էֆէնդիից, պատգամաւորներ Մուստաֆա Արիֆ էֆէնդիից, Էբուզիա Թէվֆիկ-բէյից, Թալաաթ-բէյից։

Միւֆիդ-բէյ (քարտուղար) կարդում է հեռագրի վերջնական բնագիրը, որը ծանուցանում է ասիական վիլայէթներին Ազգային Ժողովի կայացրած վճիռը Ադանայի խառնակութիւնների վերաբերմամբ։

Հեռագրի մէջ ասված է, որ սահմանադրութիւնը, որը սրբագրված է շարիաթով, հրամայում է համերաշխութիւն ազգաբնակութեան բոլոր դասակարգերի մէջև։ Իշխանութիւնները պարտաւոր են ամեն միջոցներ ձեռք առնել անկարգութիւնների առաջն առնելու համար։ Որոշումը յայտարարում է, յանուն հայրենիքի փրկութեան, որ կը պատժվեն նրանք ամենքը, որոնք չեն կատարի այդ հրամանը։

Զօհրապ էֆէնդին քննադատում է այդ բնագիրը ասելով՝ թէ շատ անորոշ է դա։ Նա կամենում է, որ հեռագրի մէջ ակնարկութիւններ լինեն յանցաւորների վերաբերմամբ։

Մուստաֆա Արիֆ էֆէնդին պաշտպանում է որոշման այդ բնագիրը։

Պապիկեան էֆէնդին ընդունում է նոյնպէս բնագիրը։

Դոկտոր Արիֆ Հիքմէթ էֆէնդին դուրս գցել բնագրից «հարկաւոր դէպքում» (միջոցներ ձեռք առնելու) խօսքը։

Զօհրապ էֆէնդին շարունակում է քննադատել բնագիրը։

Սաիդ փաշան ասում է, որ ինքն հատուած առ հատուած կը կարդայ բնագիրը և ով նկատողութիւն ունի անելու, թող անէ։

Մեծամասնութիւնը հաւանութիւն է տալիս իւրաքանչիւր հատուածին։

Զօհրապ էֆէնդին յիշեցնում է, որ 15 տարի առաջ կառավարութիւնը հրաման է տուել վալիներին, սակայն դա չէ կանգնեցրել կոտորածները։

Սաիդ-փաշան հարցնում է՝ թէ ինչ ձևակերպութիւն է ուզում Զօհրապ էֆէնդին։

Զօհրապ էֆէնդին նկատում է, թէ պէտք է պարզօրէն ասել, որ հայերը ուրիշներից աւելի են ջարդ կրել։ Նա խնդրում է շեշտել այդ բանը։

Մուստաֆա Արիֆ էֆէնդին հարցնում է՝ թէ ինչ նշանակութիւն ունի այդ շեշտումը։

Սաիդ-փաշան տրամադիր է ընդունել մի բնագիր, որ գոհացնէր Զօհրապ էֆէնդիին։

Թալաաթ-բէյ հակառակ է շեշտման դէմ, որը կարող է թիւրիմացութիւնների տեղիք տալ և այլ կերպ տպաւորութիւն թողնել։

Սաիդ փաշան քուէարկութեան է ենթարկում և մեծամասնութիւնը ընդունում է յանձնաժողովի խմբագրած բնագիրը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ՆԻՒԹԱԿԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Բոլոր քաղաքակիրթ ազգերի մէջ ազգային կեանքի ուսումնասիրութեան և ազգային հնութիւնների պահպանութեան գործը առաջնակարգ պարտականութիւն է համարվում, և այդ նպատակի համար ահագին ազգային գումարներ են յատկացվում։ Հայ ազգը, որքան հարուստ իր ազգային հնութիւններով և ազգային կեանքի ինքնուրոյնութեամբ, այնքան անտարբեր է դէպի նրանց պահպանութեան և ուսումնասիրութեան գործը, և դրա ամենալաւ ապացոյցը կարող է լինել այն, որ Հայոց Ազգագրական Ընկերութիւնը իչխում է իր գիտական բարձրութիւնից երեկոյթներ և գրասանք կազմակերպելու, որպէսզի մի քանի կոպէկ ձեռք բերէ գործադրելու այն բանի համար՝ որ որակում է հայ անունը, որ թոյլ է տալիս հային մարդկութեան մէջ առանձնայատուկ տեղ գրաւելու, և առանց որին նա կորցնելու է իր ազգայնութեան raison d'être-ը: Կը գայ մի օր, անշուշտ, երբ հայ ազգը կուլտուրապէս բարձրանալով կը զգայ իր այդ ամօթալի անտարբերութիւնը, սակայն շատ բան արդէն կորած ոչնչացած կը լինի. և հէնց այժմ էլ շատ բան այլևս չէ կարելի ձեռք բերել նոյնիսկ անագին գումարներով: Ափսոս, որ թէև ունենք բարեգործներ, սակայն չունենք նոյն գաղափարը ըմբռնողներ: Եր.

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԻ ՀԱՇԻՒԸ

Կովկասագիտական բարձր դասընթացքների կառավարիչ ձայնաւոր իշխ. Գ. Մ. Թումանովը մօտ օրերս Թիֆլիսի քաղաքային վարչութեանը ներկայացրեց հետևեալ հաշիւը յիշեալ դասընթացքների գործունէութեան մասին յընթացս 1908 թ. սեպտեմբերի 10-ից մինչև 1909 թ. ապրիլի 4-ը:

Կրթական տարվայ ընթացքում դասընթացքներում (որ գտնվում է Պուշկինեան գրադարանում) կարդացվեցին 52 դասախօսութիւններ. այսինքն 1) կովկասեան լեզուների համեմատական նկարագրութեան մասին 10 դասախօսութիւններ (կարդաց Միւնխէնի համալսարանի դոկտոր Ա. Դիրր), 2) կովկասեան ցեղերի մասին 2 դասախօսութիւն (նոյնը), 3) կովկասեան լեգենդանիրը Պրոմէթէոսի մասին 1 դասախօս. (նոյնը), 4) Առաջաւոր Ասիայի հին պատմութիւնը 8 դաս. (կարդաց Բերլինի համալսարանի դոցենտ Բ. Խալաթեանց), 5) Կովկասի գրաւումը արաբների ձեռքով արաբական աղբիւրների համաձայն 2 դաս. (նոյնը), 6) հայերէնի ծագումը 1 դաս. (նոյնը), 7) հայկական պատմութիւնը (մինչև Արշակունիները) 10 դաս. (կարդաց Ս. Լիսիցեան), 8) վրաց գրականութեան պատմութիւնը (Ռուսթավէլուց մինչև Գուրամիշվիլին) 8 դաս. (կարդաց Մոսկվայի պրոֆ. Խախանով), 9) քաղաքատնտեսութեան մասին 6 դաս. (կարդաց Պետերբ. դասախօս Վ. Տոտոմեան), 10) կօոպերացիայի մասին— 4 դաս. (նոյնը):

Մի քանի դասախօսութիւնների ժամանակ ցոյց տվեցին պատկերներ մոգական լապտերով:

Բացի վերոյիշեալ դասախօսութիւններից ուսումն. տարվայ ծրագրում մտցված էին հետևեալ առարկաները. «Նոր հայկական բելլետրիստիկայի պատմութիւնը» (Էջմիածնի ճեմարանի տեսուչ Մ. Բերբերեան): «Սովորական իրաւունքը» (Պետ. պրոֆ. Գրեդէսկիւլ), «Եկեղեցին և պետութիւնը հին Վրաստանում» (4-րդ գիմնազիայի դասատու Գորգաձէ) և «Աշխարհային տնտեսութիւն» (դաս. պրոֆ. Իսաէվ): Սակայն այս դասախօսութիւնները տեղի չունեցան դասընթացքների վարչութիւնից անկախ հանգամանքների շնորհիւ: Այդ պատճառով անցեալ տարվայ դասընթացքներում կարդացվեցին աւելի քիչ դասախօսութիւններ, քան նախանցեալ տարի: Նոյն պատճառով, յաճախողների թիւը և դասախօսութիւնների եկամուտն աւելի պակաս եղաւ նախանցեալ տարվանից, այսինքն անցեալ տարի ընդամէնը յաճախել են 1847 հոգի, կամ ամեն մի դասախօսութեան 35—36 հոգի: Մուտքի վճարը եղել է 30 և 10 կոպէկ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Գորիս, 20 ապրիլի

Ապրիլի 17-ին, Շուշում, կարճատև հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց վաճառական Գէորգ Մինասեանցը: Հանգուցեալը հազիւ 42 տարեկան կը լինէր: Դիակը Գորիս բերելու օրը (18-ին) հասարակութիւնը և ընկեր վաճառականները փակեցին բոլոր խանութները և դիմաւորեցին 25-աչափ ձիաւորների ուղեկցութեամբ քաղաք բերվող դիակը: Թաղումը տեղի ունեցաւ երէկ, մեծ բազմութեան ներկայութեամբ: 3 ընկերներից պսակ կար: Հանգուցեալի երկու եղբայրներն իրանց անժառանգ եղբօր յիշատակը յարգելու համար Գորիսի գիւղի դպրոցին նուիրեցին 20 ր., քաղաքի ծխ. դպրոցին 25 ր., ևս վերջին դպրոցին 600 ր. անձեռնմխելի գումար, որի տոկոսներով չքաւոր աշակերտներ պիտի սովորեն դպրոցում:

Պատարագին խօսեց Խորէն քահանան, իսկ գերեզմանատանը պ. Ս. չեշտեց հանգուցեալի այն մի շարք բարեմասնութիւնները, որոնց համար նրա մահը ընդհանուրին վիշտ է պատճառում:

Լսեցինք, որ Ն.-Նախիջևանի թեմ. դպրոցի աշակերտներից մի խումբ մտադիր է գնալ Զանգեզուր և Տաթև էկսկուրսիա կատարել: Եթէ ճիշդ է այդ լուրը և խմբի առաջնորդները լինեն մեր գաւառի հնութիւններին ծանօթ մարդիկ, այդ էկսկուրսիան անչափ հետաքրքրական կարելի է դարձնել: Սագանդարեան

Գանձակ, 20 ապրիլի

Մօտ 1½ ամիս առաջ կորինապատցոց քաջ յայտնի լինելով հայ այգետէրերի տրամադրութիւնը, որ սրանք ոչ մի կերպ չեն համաձայնելու «Արափլու» գետակից ջուր բաց թողնել Կորինապատ, ինչպէս տեղի ունեցաւ անցեալ ամրան սեզոնին, ուր հազար ու մի նեղութիւններով ձեռք բերած պարտէզներն ու բանջարանոցները համարեա չորացան, մի խնդրագրով դիմեցին Նահանգապետին, խնդրելով նրա աջակցութիւնը, որ եկող ամառ նոյն բաղդին չարժանանայ Կորինապատը:

Նահանգապետը, սիրով ընդունելով խնդիրը, ասաց, որ ամեն ինչ կը կատարվի իր ժամանակին:

Նահանգապետի մի գրութեան համաձայն ամսիս սկզբին, երկրաչափ-գիւղավէկի պատուէրով, Ջրաբաշխական հիմնարկութեան անդամները հայ, թուրք և գերմանացի այգետէրերին ժողովի էին հրաւիրել, առնելու նրանց համաձայնութիւնը, «Արափլու» գետակից մշտական ջուր բաց թողնելու Կորինապատին:

Չը նայած որ ժողովի սկզբին ոստիկան Մ. Աֆանասովը յայտնեց, որ նահանգապետը գտնում է, որ անհրաժեշտ է Կորինապատին ջուր բաց թողնել, բայց և այնպէս ժողովականները, գլխաւորապէս հայ այգետէրերը, բացառութեամբ գերմանացի և մի հայ այգետէրերի, որոշեցին կորինապատցոց ընդմիշտ զրկել ջուր ստանալու իրաւունքից:

Եթէ այս որոշումն իրականանայ և նահանգապետը իր միջամտութիւնը չուժեղացնի վերջ տալու այս խնդրին, Կորինապատի բնակիչներին մնում է՝ կամ ս. Յովհան. եկեղեցուց ստանալ իրանց հարիւր հազարների արած ծախքերը կամ ծախել 350 տնից բաղկացած թաղամասը ու հեռանալ:

Ցանկալի էր, որ հայերի և թուրքերի բանիմաց տարրն ուշադրութիւն դարձնէր այս խնդրի վրա, մի խնդիր, որի դրական լուծում ստանալուց յետոյ Կորինապատ քաղաքամասը կարող է իր գոյութիւնը պահպանել:

Քանի ուշ չէ, հարկաւոր է միջոցներ ձեռք առնել: Սարգօ

—

Բալախանի, 20 ապրիլի

Բալախանիի հայ բնակիչների մէջ եռանդուն կերպով պրոպագանդա է մղվում առաջիկայում կայանալիք ծխականների ժողովի մասին:

Թէև պաշտօնապէս դեռ յայտարարված չէ, բայց շուտով գործակալ Զաւէն վարդապետից կը յայտարարվի, և ժողովը, ինչպէս իմացանք, տեղի կունենայ առաջիկայ կիրակի Բալախանիի Զաբրաթ մասի Ա. Մանթաշեանի շէնքում:

Պէտք ասել, որ բալախանեցիք խիստ վիրաւորված են գործակալից, ուստի և հաւանական է, որ ժողովը, ինչպէս ցոյց են տալիս պրոպագանդի նշանները, անհետևանք մնայ, մինչև որ իրերի դրութիւնը պարզվի:

Հարցի էութիւնը հետևեալն է:

Ինչպէս արդէն յայտնի է, Բալախանիի միակ ծխատէր Մեսրոպ քահանային Շամախու կոնսիստորիայի միջոցով զրկեցին քահանայական կոչումից. այժմ նրա փոխարէն նոր քահանայ պիտի ընտրվի: Բալախանեցիք, որոնք գլխաւորապէս բաղկացած են համալսարանական ինժեներներից, կառավարիչներից և միջին կրթութիւն ունեցող անձնաւորութիւններից և բանուորներից, ամիսներ առաջ 6 հոգուց բաղկացած մի պատգամաւորութիւն ուղարկեցին գործակալի մօտ, որպէսզի սա յայտնէ, թէ ինչ և ո՛ր յանցանքների համար են կոչումից զրկում իրանց ծխատէր քահանային, որը 15—20 տարի իրանց հովիւն է: Սակայն գործակալը բաւարար պատասխան չը տուեց: Այժմ բալախանեցիք իրանց հոգևոր պէտքերը ստանում են ճեմարանաւարտ Արշակ քահանայից, որից և գոհ են, ուստի պրոպագանդա են անում ժողովի ժամանակ նախ պահանջել հոգ. իշխանութիւնից՝ Մեսրոպ քահանայի գործերը նորից քննել և եթէ ծխականներին ևս յայտնի կը լինի նրա մեղաւոր լինելը, այն ժամանակ, ի հարկէ, ինքն ըստ ինքեան հարց կառաջանայ նոր քահանայ ունենալու մասին. իսկ մինչև քննութիւնը Արշակ քահանայով բաւականանալ:

Բալախանեցիների բարձրացրած այդ հարցը օրինական է, որովհետև մեր եկեղեցին, ինչպէս յայտնի է, ազատ ժողովրդավարական եկեղեցի է և նրա ծուխը ոչ միայն իրաւունք ունի, այլ և պարտական է հսկել, որպէսզի չը բռնաբարվեն իր իրաւունքները:

Նաւթային գործերի մէջ առ այժմ փոփոխութիւն չը կայ, իսկ եղած նորութիւններից մէկն այն է, որ Առաֆելեանը նոյնպէս ստիպված եղաւ 12 տարի ժամանակով իր նաւթահանքը կապալով տալ թուրքի: Վերջին 2—3 տարվայ մէջ այդ երևոյթը խիստ վարակիչ է դառել. հայ նաւթահանքի տէրերն իրանց նաւթահանքերը ժամանակաւորապէս տալիս են թուրքերին:

Այդ երևոյթը բացատրվում է նրանով, որ երբ նաւթահանքի ղեկը թուրքի կամ օտարի ձեռին է լինում, օտարն է տէր ու տիրական դառնում, բանուորները պահանջներ անել չեն կարողանում, թուրքը ոչ դուրս արած բանուորին է 3—4 ամսվայ աւել ռոճիկ տալիս, ոչ 8 ժամ աշխատանք, ոչ էլ այն ռոճիկները, որ ստանում են հայերից: Եւ զարմանալին այն է, որ ոչ մի բանուորական կուս. բանուորների շահը օտար ֆիրմաների առաջ պաշտպանել չէ կարողանում, բացի հայ ֆիրմայից: Թէև այդպիսով հայերի ձեռից դուրս է գալիս արդիւնաբերութիւնը:

Վերջին 4—5 ամիսներում Բալախանին խաղաղ էր, ալան-թալան, սպանութիւններ չը կային: Այժմ նորից երևան են գալիս շանտաժի դէպքեր: Անցեալ օր մի օրվայ ընթացքում երկու դրամատէրերի վերաւորեցին և դրամը, որ ռոճիկ պիտի բաժանէին, տարան: Սպանեցին անյայտ մարդիկ բուրաւօյ վարպետի օգնական մի հայի:

Լաւ կը լինէր, որ քաղաքապետը իր ուշադրութիւնը մի քիչ էլ Բալախանիի վրա դարձնէր և տեղիս ոստիկանութիւնը կարգի բերէր:

Եղանակները սկսել են տաքանալ. բանուորութեան օրերը տաժանալից են ամառվայ 4—5 ամիսները, մանաւանդ որ առանց տօթի էլ հէնց վառ կաթսաների առաջ են աշխատում: Ս. Գարագաշ

Ն. Վ. ԳՈԳՈԼԻ ԱՐՁԱՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Այսօր, ապրիլի 26-ին, Մոսկվայում մեծ հանդէսով բացվելու է Ն. Վ. Գոգոլի արձանը: Այդպիսով «Ռուսաստանի սիրտ» Մոսկվան կունենայ իր պատերի մէջ երկու հռչակաւոր բանաստեղծների՝ Պուշկինի և Գոգոլի յիշատակներին արժանի յուշարձաններ: Թէ առաջինի և թէ երկրորդի արձանները կանգնած են հասարակական հանգանակութեամբ: Պուշկինի արձանի բացումը (1880 թւին) մեծ տօնակատարութիւն էր. ի զուր չէր ճառախօսներից մէկը՝ դրամատուրգ Օստրովսկին իր ճառի մէջ ասել, որ «на нашей улицѣ праздникъ!» (այսօր մեր տօնն է): Այնտեղ արտասանեց իր ոգևորված ճառը Դոստոևսկին, որ ահագին տպաւորութիւն էր թողել լսողների վրա և որով երկար ժամանակ զբաղվեց ռուս մամուլը. հանդէսին եկել էր հիւանդ վիպասան Ի. Ս. Տուրգենևը, Պուշկինի այդ սիրահարը և նրա հարազատ աշակերտը:

Գոգոլի արձանի բացման հրաւիրված են բազմաթիւ ռուս և օտարազգի գրականագէտներ, մատենագիրներ, գիտնականներ, արտիստներ և այլն. լինելու են մի շարք ներկայացումներ կայսերական և մասնաւոր թատրոններում, մի շարք դասախօսութիւններ Մոսկվայի զանազան կրթական-լուսաւորական և գիտնական ընկերութիւններում, ակումբներում: Մոսկվայի «գրականութեան սիրողների» ընկերութիւնում տեղի է ունենալու հանդիսաւոր նիստ, որտեղ ի միջի այլոց հռչակվելու են նոր պատւաւոր անդամների անունները: Սպասվում են մեծ թւով արտասահմանից հիւրեր՝ գիտնական կաճառների, համալսարանների ներկայացուցիչներ:

Անշուշտ վաղվայ և յետագայ օրերի հեռագիրները մեզ կը տան հանդիսակատարութիւնների բոլոր փրագները:

Պ. Զաքարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, Գոգոլի արձանի մօտ (Ալէքսանդրեան այգում) տեղի կունենայ հոգեհանգիստ: Որոշված ժամին քաղաքային դպրոցների բարձր դասարանների աշակերտները պէտք է ժողովվեն Ալէքսանդրեան այգում:

◆ Եղբ. Զուբալովները ապրիլի 24-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեանն ուղարկել են 11,000 րուբլի, որից 5000 րուբլին պէտք է գործադրվի ժողովրդական տան շինութիւնը աւարտելու համար և 300 րուբլին՝ այդ տան մէջ գրադարան հաստատելու համար:

◆ Յիշեցնում ենք հայ հասարակութեան, որ այսօր Արտիստական Ընկերութեան ամառային այգում (Միքայէլեան փողոց) կը կայանայ Հայոց Ազգագրական Ընկերութեան շքեղ զբօսանքը: Ընկերութեան վարչութիւնը ինչպէս միշտ, այնպէս էլ այս անգամ ջանք չէ խնայել հետաքրքրական դարձնելու զբօսանքը: Յուսով ենք, որ վարչութեան յոյսերը՝ ստանալ բաւարար արդիւնք զբօսանքից իր առանց այն էլ սուղ միջոցները մասամբ լրացնելու համար՝ կը պսակվեն կատարեալ աջողութեամբ:

◆ Այսօր Թիֆլիսի ժողովարանի ամառային այգում տեղի կունենայ Որբախնամ Ընկերութեան օգտին մի զբօսանք գոհացուցիչ ծրագրով:

◆ Ապրիլի 23-ի խուզարկութիւնների և ձերբակալութիւնների ժամանակ ձերբակալվել է նաև Թիֆլիսի 2-րդ վարկային ընկերութեան հաշւապահ Արամ Մակարեանը:

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը Կովկասի Փոխարքայի միջնորդութեան համաձայն 1520 րուբլի է յատկացրել Դուշեթի շրջանի Տագադ և Ուզգալ-Ռօսօ գիւղերի բնակիչներին երեք տարի ժամանակով փոխ տալու համար: Յիշեալ գիւղերի բնակիչները անցեալ տարի վնասվեցին անբերրիութիւնից:

◆ Թիֆլիսի նահանգապետը բեկել է քաղաքային դումայի ապրիլի 23-ի որոշումը քաղաքային վարչութեան քարտուղարին 900 րուբլի միանուագ նպաստ տալու մասին:

◆ Ապրիլի 24-ին Փոխարքային ներկայացաւ մի պատգամաւորութիւն «ռուսաց կլուբի» կողմից:

◆ Բօդման Վլ. Մարջանովը միջնորդութիւն է յարուցել երկրի բարձր իշխանութեան առաջ թոյլատրելու իրան նաւային երթևեկութիւն հաստատել Րիոնի և Օրպիրիի միջև:

◆ Թիֆլիսում հաստատվել է հրէական երաժշտութեան և գրականութեան ընկերութիւն, որի կանոնադրութիւնն արդէն հաստատված է: Ընկերութեան նպատակն է՝ ուսումնասիրել հրէական գրականութիւնը և անդամների մէջ տարածել երաժշտական կրթութիւն:

◆ Այս ամառվայ սէզոնում կազմակերպվում է լարանուագների խումբ 32 նւագածուց բաղկացած, որը շաբաթը երեք անգամ նուագելու է Կրուժօկում և երկու անգամ Արտիստական ընկերութեան մէջ և ժողովարանում:

◆ Ապրիլի 24-ին զինուորական պահակախումբը Գօլովինսկի պրօսպէկտում կատարեց շուրջկալ, որի ժամանակ ձերբակալվեցին մի քանի տասնեակ անանցաթուղթ և անգործ մարդիկ:

◆ Եղբ. Զուբալովները 100 րուբլի են ուղարկելու բժ. Ա. Խատիսեանի միջոցով Թիֆլիսում արագ օգնութիւն կազմակերպելու ֆոնդի համար:

◆ Քութայիսից «Зак.» թերթին հաղորդում են, որ մօտ օրերս նահանգական դատարանում երևան են հանել կեղծիք. պաշտօնեայ Զագումինինը, որ այժմ արձակված է պաշտօնից, կեղծ ստորագրութեամբ ստացել է մօտ 1000 րուբլու փոխանակագիր:

◆ Ստացանք Դիւան Հայոց Պատմութեան հրատարակութեան ութերորդ գիրքը, որ պարունակում է Դաւիթ կաթողիկոսի ժամանակին վերաբերեալ պատմական դոկումենտների երկրորդ մասը (1803—4 թ.): Ամբողջ հատորը բաղկացած է 566 մեծադիր սիւներից կամ 283 մեծադիր էջերից և պարունակում է մի գունատիպ օսմանեան ֆերման, առաջաբան, յաւելուածներ և ծանօթութիւններ: Հրատարակիչն է Գիւտ ա.-ք. Աղանեան. հրատարակված է Ալ. Մանթաշեանի ծախքով ի յիշատակ իր ծնողների: Տպված է Թիֆլիս, Աղանեանի տպարանում, 1908 թ., գինն է 4 րուբլի: Հրատարակիչը տուել է մի համառօտ պատմական տեսութիւն Դանիէլ և Դաւիթ կաթողիկոսների ժամանակի պատմութեան վրա:

◆ Ն. Վ. Գոգոլի արձանի բացման հանդէսին մասնակցելու հրաւէր ստացած հաստատութիւնների թւում, «Г. М.» լրագրի ասելով, յիշված է նաև հայոց միակ բարձրագոյն դպրոցը՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանը, որը իր կողմից հանդիսին մասնակցելու համար ներկայացուցիչներ է նշանակել հայ կեանքի ու գրականութեան քաջ գիտակ Իւ. Ա. Վեսելօվսկուն և Լազարեան ճեմարանի արևելեան լեզուների ուսուցիչ ճեմարանի նախկին սան Արսէն սարկաւագ Սիմոնեանցին: Այդ ներկայացուցիչները պէտք է ճեմարանի անունից պսակ դնեն Գոգոլի արձանի վրա:

◆ Կովկասեան տնայնագործական կոմիտէտը, իր անդամ Զոնիկօվսկու առաջարկութեան համաձայն, որոշել է միջնորդութիւն յարուցել երկրի բարձր իշխանութեան առաջ, որ 20,000 րուբլի բաց թողնվի զէմստվային միջոցներից Կովկասի մանր տնայնագործական արդիւնաբերութիւնը զարգացնելու համար:

◆ Ապրիլի 23-ի ցերեկվայ ժամը 1-ին Գօրու պետական գանձատան մէջ երևան են հանել փորուածք:

◆ Յօգուտ Շատախի գր.-ընթերցարանի խմբագրութիւնս ստացաւ Գրիգորիս քահ. Մատինեանցից 4 կտոր գրքոյկ: Նախկին ստացվածի հետ միասին՝ մեզ մօտ կայ այժմ 23 կտոր գիրք:

◆ Մեզ խնդրում են տպագրել հետևեալը. «Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը ստանալով մեծ. պ. Յ. Աստուածատրեանից յօգուտ Ընկերութեան 10 ր.՝ յայտնում է իր խորին շնորհակալութիւնը»:

◆ Ապրիլի 24-ին զինուորական պահակախումբը շուրջկալ կատարեց Մաղաթեան կղզու վրա և ձերբակալեց 30 կասկածելի մարդկանց: 10-րդ քաղաքամասում նոյն օրը ձերբակալեցին 10 մարդու:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Էջմիածին, 25 ապրիլի

Նորայրի ուղարկած հեռագիրը Էջմիածնից, որ տպագրված է «Փորձ» լրագրի № 83-ում, սուտ է և զրպարտութիւն:

Մանրամասնութիւնը նամակով:

Տէր-Խաչատրեանց

Յ. Գ.—Պատճէնը ուղղված է «Փորձին»:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Բ. Հ. Կուլտուրական Միութեան

Ռոստով-Դոնի վրա, 22 ապրիլի

Երկրորդ անգամ յայտնում եմ Կուլտուրական Միութեանդ ուղարկել ինձ վեցամսեայ հոնորարս՝ մեր պայմանի համաձայն 19 ր. և նկարս՝ որ խնդրել էիք «Զանգ» շաբաթաթերթի համար:

Շուշանիկ Կուրղինեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԷՊԵՐ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴԻ ԿԵԱՆՔԻՑ

«Նորմալ մարդը ընդունակ չէ հոգեկան այնպիսի շարժումների, որոնք սովորաբար յիմարօրէն կամ կեղծաւորութեամբ անուանվում են վսեմ. Ով համոզված է իր անձնուէր բարեկամի, ընկերոջ կամ ծառայի անշահասիրութեանը, նրան հարկաւոր է գժանոց ուղարկել:

«Առաջին մարդիկը (Ադամն ու Եւան) արտաքսվեցին դրախտից այն պատճառով, որ միամտութիւն ունէին կարծելու, թէ Աստուած անշահասէր էր:

«Զոհաբերութիւններն ու աղօթքները թոյլ ջանքեր են, որոնցով մարդը ձգտում է կաշառել Արարչին: Մարդկային գոյութեան ամբողջ ընթացքում մարդը միշտ առնում էր ինչպէս երկնքի, այնպէս և իր շրջապատող միջավայրի բարեկամական վերաբերմունքը *)»:

Թիւրքիայի պահընկէց սուլթան Աբդուլ-Համիդը իր ամենազօր պալատական խորհրդատու արաբ Իզզէթ փաշայի հետ խօսելիս այդպիսի մտքեր էր արտայայտում իր անկեղծութեան րօպէներին:

Աբդուլ-Համիդի համար ամբողջ մարդկութիւնը երկու մասի է բաժանված. մի մասը ոսկու հմայքին հեշտութեամբ ենթարկվող մարդիկն են, իսկ միւս չափազանց սակաւաթիւ մասը՝ միամիտ, յիմար տխմարները: Առաջին տիպի մարդկանց նա արհամարհում էր մինչև հոգու խորքը, բայց և մօտեցնում էր իրան: Դեռ ևս երիտասարդական հասակից նա սկսեց վարձատրել արքունի պալատականների հաւատարմութիւնը: Թիւրքիայի պատմութիւնը բաւականաչափ բնորոշ օրինակներ է տալիս այդ բանին:

Ֆերիդ փաշան Ադրիանուպօլսի վալի էր, երբ հրաւէր ստացաւ ստանձնելու մեծ վեզիրի պաշտօնը: Նա իսկոյն, ևեթ ուղևորվեց Կ. Պոլիս: Ֆերիդի հակառակորդ պալատականները, լաւ ուսումնասիրած լինելով իրանց տիրոջը, սկսեցին գովաբանել ապագայ վեզիրի անկաշառութիւնը: Այդ լսելուն պէս փադիշահը հրամայեց.

— Թող Ֆերիդ-փաշան անմիջապէս յետ գնայ իր պաշտօնավայրը: Բարձրագոյն Դուռը գժանոց չէ:

Բեռլինի կոնգրէսից յետոյ, Ջեքի փաշայի մասնակցութեամբ և սուլթանի նախագահութեամբ, Ելդըզ Քեօշկում կայացաւ մի խորհուրդ մշակելու մի հրէշային ծրագիր՝ Թիւրքիայի հայ ազգաբնակութիւնը բնաջինջ անելու համար: Այդ առիթով բարձր շրջաններում պտտում էին աներկդիմի լուրեր: Ռուս-թիւրքական պատերազմի հերոս գեներալ Ֆուադ-փաշան, տեղեկութիւն ստանալով այդ մասին, շտապեց սուլթանի մօտ և սկսեց ապացուցանել ազգային թշնամութեան կործանարարութիւնը Թիւրքիայի համար:

— Հայկական կոտորածներով դուք մեծ պետութիւններին առիթ կը տաք միջամտելու, Կովկասից զօրքերը կուղարկվեն առաջ:

Այդ սպառնալիքով Ֆուադ փաշան մտածում էր պատրաստվող կոտորածի առաջն առնել:

Պատասխանի փոխարէն Աբդուլ-Համիդը խորհրդաւոր ժպիտով հարցրեց Իզզէթ-փաշային.

— Զաւակս, կատարված են, արդեօք, բոլոր ձևականութիւնները՝ տունը դեսպան N-ին յանձնելու համար. իսկ ինչպէս ես կարծում, դեսպան Z-ի կնոջը շատ դուր եկաւ ապարանջանը:

— Եթէ ունենայի ես Բեռլինի կոնգրէսի օրվայ համար մի քանի տասնեակ միլիոններ Բիսմարկին դէպի ինձ տրամադրելու համար, կոնգրէսին կարելի էր տալ Թիւրքիայի համար ցանկալի ուղղութիւնը,—քանիցս համոզելով ասում էր սուլթանը իր մերձաւորներին:

Երբ իտալական հիւպատոսը երևան հանեց, որ Ջիւոնիայի ոստիկանապետի պաշտօնը վարող կոնտր-ադմիրալ Սաիդ-փաշան մի յայտնի աւազակի հետ յարաբերութիւններ ունի, Աբդուլ-Համիդը նկատողութիւն արեց տեղական վալի Բեամիլ-փաշային, որ Սաիդի հայրն էր, թէ ինչու նա չը կարողացաւ ծածուկ պահել թիւրքական նաւատորմի օֆիցերի՝ իր որդու գործունէութիւնը:

Բեամիլ-փաշան, պատասխանի փոխարէն, ադմինիստրատիվ կարգով ուղարկեց որդուն սուլթանի մօտ հետևեալ գրութեամբ. «Ելդըզ-Քեօշկը դաստիարակեց Սաիդին. թերևս այժմ այնտեղ կը համոզեն նրան, որ գողութիւնը մեծ առաքինութիւն չէ»:

Յուլիսեան յեղափոխութիւնը անակնկալութիւն էր Աբդուլ-Հիմիդի համար: Բայց նա չը շփոթվեց և վճռեց գործել կաշառքի միջոցով: Նիազի բէյը չը հմայվեց փադիշահի խոստումներով:

— Այդ դէպքում անմիջապէս բռնեցէք ապստամբին և գնդակահարեցէք նրան Սամսրու կամուրջի վրա, որպէս զի ուրիշներին էլ օրինակ չը լինի, — հրամայեց Աբդուլ-Համիդը:

Բայց քիչ ժամանակից յետոյ սուլթանը, որպէս զի իրան չը գնդակահարեն, ստիպված եղաւ անձնատուր լինել և սահմանադրութիւն տալ երկրին:

Այդ չէր նշանակում, որ սուլթանը վերջ-

---

*) Ծանօթ.—«Ելդըզ Քեօշկի կուլիսները», Սեֆերբէյի (Սաբահ-Էդդին).

նախանապէս կորցրեց իր հաւատը ոսկու կախարդական ոյժին։

Եւ նա մասամբ չը խաբվեց։ Ոսկին հակա-յեղափոխութիւն կատարեց, նա փաստօրէն ցրեց պարլամենտը և երեք օրով վերականգնեց միահեծանութիւնը։ Սուլթանը կարողացաւ խորը թափանցելու իր ընդունակութեամբ յաղթանակ տանել։ Բայց, աւաղ, վերջին օրերը ոչ միայն բէակցիայի, միահեծանութեան ու Աբդիւլ-Համիդի՝ որպէս սուլթանի՝ իրա տապալումի օրերն էին, այլ և նրա փիլիսօփայութեան, որով նա ղեկավարվում էր 33 տարի և որի օգնութեամբ նա պահում էր գահը իր ձեռքում։

Վերջին նրա փորձերը անաջող անցան. 100 միլիօն րուբլիները, որ նա խոստացել էր իբրև փրկանք, անզօր գտնվեցին սուլթանի անկման առաջն առնելու։

Շատ կարելի է, այժմ ժամանակակից մարդասեայներից այդ մեծագոյնը, զրկվելով իշխանութիւնից, արդէն յարգանք է զգում դէպի երկրորդ տիպի մարդիկ, որոնց նա ճանաչում էր իբրև միամիտ-տխմարներ։

ՕՍՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼԻՑ

Թիւրքիայում այժմ թագաւորող տունը առնում է իր սկիզբը Թիւրք-օգուզ խան Օսմանից (Էրթօղրուլի որդին), որը 1299 թւին իրանից թօթափեց Թիւրք-սելջուկների լուծը և իրան յայտարարեց անկախ սուլթան։ Նոր արդէն խալամացած, թագաւորութեան աճումը շնորհիւ Բիւզանդիայի թուլութեան շատ աջող էր առաջ գնում։ Արդէն Օսմանի որդի Օրխանի օրով (1326—59) Թիւրքերը գրաւեցին Փոքր-Ասիայի մեծ մասը, անցան ծովով Եւրօպա և հաստատվեցին Գալլիպօլում (Դարդանելի վրա)։ Մուրադ I-ի, Բայազէտ I-ի, Մուհամմէդ I-ի (1413—1421) և Մուրադ II-ի թագաւորութեանց ժամանակ Թիւրքերի հզօրութիւնը աճում էր, չը նայած Թամերլանի հասցրած հարուածին (Բայազէտի օրով)։ Մուհամմէդ II Ցաղթողի օրով Թիւրքերի ձեռքը ընկաւ և Կ. Պօլիսը, Բիւզանդիայի մայրաքաղաքը, որը արդէն կորցրել էր իր բոլոր հողերը (1453 թւին)։ Թիւրքերի սուլթանը այդ օրվանից իրան անուանում էր «երկու աշխարհների և երկու ծովերի տիրապետողը»

Մուհամմէդ Ցաղթողի երկրորդ յաջորդը, Սելիմ I-ը, բացի նորանոր նուաճումներից Եւրօպայում և Ասիայում, իր պետութեանը աւելացրեց Եգիպտոսը, որտեղ իշխում էին (Կահիրէում) երբեմն հզօր արաբ Աբբասիդների տան խալիֆները, այդ ժամանակ արդէն անզօր, թէև ճանաչված որպէս «մարգարէի ժառանգներ»։ Սելիմ I-ը իր հետ Կ. Պօլիս գերի բերեց խալիֆին և ստիպեց նրան զիջանել իրան «հաւատացեալների տէր» սրբազան կոչումը։ Ի դէպ նկատենք, որ դա շարիաթի ոգուն հակառակ մի բան էր, քանի որ խալիֆներ կարող էին միայն լինել արաբները, այն էլ «Կորէյշի» ցեղից, որից ծագում էր ինքը մարգարէն։ Սակայն խալիֆաթի այս փոփոխումը անցաւ առանց որևէ բողոքի։ Սուլէյման Մեծի կամ Ցաղթողի թագաւորութեան միջոցին (1520—1566) Թիւրքիան հասաւ իր հզօրութեան գագաթնակէտին։ Նրա իշխանութիւնը տարածվում էր Հարաւային Արաբիայից մինչև Վիէննայի շրջակայքը։ Ունգարիան դարձաւ Թիւրքական նահանգ և դեռ դժուար էր գուշակել թէ կը դիմանայ արդեօք Արևմտեան Եւրօպան խալամի գրոհին։ Սուլէյմանով վերջանում է հռչակաւոր սուլթանների շարքը, և այնուհետև Թիւրքիայի պատմութիւնը դառնում է մի պատմուածք, թէ ինչպէս նա կորցնել սկսեց իր ձեռք բերած հողերը, և սկսվում է պալատական յեղաշրջումների և ինտրիգների մի անվերջ շարք։ Հարստութեան թոյլ կողմերից մէկն էր բազմակնութիւնից առաջացած «արքայազների» մեծ թիւը։ Դրա ղեղթափն էր ըսպանութիւնը, սկզբում անլեգալ (ապօրէն), իսկ Մուհամմէդ II Ցաղթողի օրով սիստեմ դարձած մի բան։ Այս սուլթանը, վճռելով սպանել իր եղբօրը, հրատարակեց այս տեսակ օրինական մի կարգադրութիւն. «Ուլեմների (օրէնսգէտների) մեծամասնութիւնը համարում է բոլորովին թոյլատրելի մի գործ, որ իմ որդիներս կամ թոռներս գահ բարձրանալիս, ամբողջ աշխարհի խաղաղութիւնը պահպանելու համար, գլխատեն իրանց եղբայրներին։ Այս հիման վրա նրանք կարող են վարվել»։ Եւ քանի այլասերվում էր թագաւորական տունը Ստամբուլում, այնքան աւելի լայն չափով էր գործադրվում այս «օրէնքը»։ Մուրադ III-ը գահ բարձրանալիս (1574 թ.) օրէնքի հիման վրա հրամայեց սպանել իր հինգ փոքրահասակ եղբայրներին։ Բայց սրանից էլ աւելի հեռու գնաց նրա յաջորդ Մուհամմէդ III-ը, որը 1595 թւին գահ բարձրանալիս կոտորել տուեց իր 19 եղբայրներին։ Այս սպանդանոցը վերջ կը տար թագաւորող տանը, եթէ նրան չը փրկէր նոյն բազմակնութիւնը։ Աւելի մեղմ բնաւորութիւն ունեցող սուլթանները խնայում էին իրանց եղբայրների կեանքը. նրանց փակում էին պալատներում և հարեմներին մինչև հարէմ թողնելը ենթարկում էին օպերացիայի, որից յետոյ նրանք զրկվում էին որդեծնութիւնից։ Ցամենայն դէպս, սկսած XVII դարից Օսմանները չը տուին ոչ մի նշանաւոր սուլթան։ Մասամբ դա դրանով էր բացատրվում, որ եռանդ ցոյց տուող հազւագիւտ սուլթանները զոհ էին դառնում կատաղի ենիչէրիների սրերին։ Բայց սա էլ անկասկած էր, որ թագաւորող տունը արդէն վաղուց կրում էր իր վրա այլասերման դրոշմը։ Զանազան տեսակ խելագարութիւններ, մեծութեան մասին կասկածի խելացնորութիւն, կամ ապուշութեան տեսակներ—ահա Օսմանների արեան մէջ հոսող սպանիչ ոյժերը։ Ակնյայտնի կերպով հոգեկան հիւանդ էր Աբդիւլ-Ազիզը, նրա եղբօրորդի Մուրադ V-ը, Համիդի մեծ եղբայրը։ Եւ ինքը Աբդիւլ Համիդ II-ը հազիւ թէ համարվի առողջ մարդ։ Նրա կատաղի կասկածոտութիւնը զերծ չէր մոլութիւնից (մանիա), և ներվերի քայքայման գուշէ նշաններից մէկն էր նրա սէրը և արտակարգ ընդունակութիւնը՝ կրել իր երեսին այս կամ այն մասկան։

(«Рус. Вѣд.»)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԻԱ.

Սօցիալիստների ընտրութիւնը.—Մօտ ժամանակներս Գարի դեպարտամենտում պատգամաւորների պալատի նորերս վախճանված արմատական-սօցիալիստ անդամի փոխարէն նոր ընտրութիւն տեղի ունեցաւ։ Միացեալ սօցիալիստները դրել էին կամպեր Մօրելի թեկնածութիւնը, իսկ միապետականները՝ յայտնի միլիօներ դուքս Իւզեսին և այլն։ Քուէարկվող չորս թեկնածուներից ոչ մէկը մեծամասնութիւն չը ստացաւ։ Վերաքուէարկութեան ժամանակ միապետականները, որոնց թիւը ամբողջ շրջանում մօտ 30% էր կազմում, իրանց ձայները տուին սօցիալիստներին և այդպիսով նպաստեցին նրանց թեկնածու կամպեր Մօրելի ընտրութեանը։ Միապետականները յայտնեցին մամուլի մէջ, որ նրանք ընտրութիւնների ժամանակ միշտ էլ գերադասութիւն պիտի տան սօցիալիստներին, որոնք կառավարութեան հակառակորդներն են, կառավարչական բլոկի արմատականներին կամ արմատական-սօցիալիստներին, ելակէտ ընդունելով այն՝ թէ «որքան վատ, այնքան լաւ»։

«Humanité»-ն կամպեր Մօրելի յաղթանակը վերագրում է սօցիալիստների եռանդուն ագիտացիային, մինչդեռ արմատական լրագիրները հեգնում են Ժօրէսի օրգանի այդ յայտարարութիւնը «ծայրայեղ թևերի միութեան» առիթով և մատնանշում նրա նմանութիւնը Թիւրքիայի ահրարների ու րէակցիօներների միջև նորերս պատահած միութեան հետ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳ. ԳՈՐԾ.

24 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խօլերայով հիւանդացան և մեռան 2 մարդ։

Ֆրանսիական դեսպան ծովապետ Տուշարը այսօր ընդունվեց Կայսրի մասնաւոր ունկընդրութեան։

Կիևում և Օդեսսայում մրրիկը մեծ վնասներ է առաջացրել։

ՎԵԼՍԿ։ Երէկ գաղտնաբար սպանվեց զինուորական հրամանատար փոխ-գնդապետ Տօստնովը

ՕԴԵՍՍԱ։ Քաղաքապետի կարգադրութեամբ արգելվում է իբրև կօկարդ կրել «Ռուս ժողովրդի միութեան» նշանները։

ԼՎՕՎ։ Վիսլան, Բուգավան, Վիսօկը, Սավան և Դնէպրը չափազանց վարարել են։

ԼՕՁ։ Մինչև վերջին թելը այրվեց լեհական «Վիկտօրիա» թատրօնը։ Վնասները մեծ են։

ԲԱԳՈՒ «Աօս» նաւի մէջ, որ գնալու էր Պարսկաստան, գտան ատրճանակի և հրացանի փամփուշտներ և մի պուդ վառօդ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ Մօտաւոր հաշւով սէյմի պատգամաւորներից մեծ մասը առաջվայ նման սօցիալիստներ են։

ԼԻՍՍԱԲՕՆ։ Կուսակցութիւնների լիդերների հետ բանակցելուց յետոյ, թագաւորը Լիմին յանձնեց նոր կաբինէտ կազմել։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Ա. ԽԱՆԴԱՄԻՐԵԱՆ
Վերադառնալով՝ վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը։
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Առանձնապէս՝ սրտի և թոքերի։
Ընդունելութիւնը՝ առաւօտեան ժ. 10—12-ը. երեկոյեան ժ. 5—6-ը.
Սօլօլակսկայա փող., № 6, տ. Միրզօյեվի։
(տ. օ.) 344. 100—56

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուտով լոյս կը տեսնի
ՍԱՁԱՆԴԱՐԵԱՆԻ
ԿԱԼԱՆԱՒՈՐԸ ՈՐԴԵՍՊԱՆ
(պատմուածք)
357. 2—1

Պատրաստում եմ, ամառվայ ամիսների ընթացքում,
Զայնագրութեան
Ռուսուցիչներ
Ցանկացողները շտապեն դիմել, մինչև մայիսի 15-ը, Յովհաննեան դպրոց (Бебутовская ул.) Ռոմանոս Մելիքեանին։

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ
Բօրջալուի գաւառում ծախում եմ անտառային կալուածք, 1830 դեսեատին, որը ներկայանում է անտառ-արդիւնաբերողների համար խոշոր պահանջ. մեծ կաղնի ծառեր, հաճարենի, հացենի, թղկենի, տանձենի և այլն և այլն։ Նոյն գաւառում, նոյնպէս և Դուշէթի և Գօրու գաւառներում ծախում եմ միանգամայն էժան, ամենքի համար խոշոր նշանակութիւն ունեցող մի քանի կալուածքներ, որոնք պատկանում են մի կալուածատիրոջ։ Հետաքրքրվող անձերը թող ռուսերէն դիմեն մանրամասն տեղեկութիւնների համար՝ С.-Петербургъ, Невскій, 140, А. Г. Муръ.
(П. 60286) 306. 10—6

ՀԱՐԿԱՒՈՐ Է
ԳԱՆՁԱՊԱՀՈՒՀԻ
(Հայուհի)
Երաշխաւորութեամբ։
Հասցէն իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատան գրասենեակից։
(շ. կ.) 353. 2—2

Մանկաբարձուհի եւ մասնաժիւս
Հ. ՍԱՆԹՈՒՐԵԱՆ-ԴԱՒԹԵԱՆՑԸ
Ընդունում է ծնունդներ և բժշկում է բժշկի խորհրդով կանացի հիւանդութիւններ, սրսկում է կանանց, տղամարդկանց և երեխաների կաշուի տակ թէ իր և թէ հիւանդների մօտ մատչելի գնով։ Գաւառացիներին տալիս դիւրութիւն և խորհուրդներ կանանց հիւանդութիւնների վերաբերմամբ։
Ընդունելութիւնը ամեն օր ժամը 12—1-ը, իսկ կիրակի օրերը պատուաստում է ծաղիկ։ Հասցէն՝ Петхаинскій подъемъ № 4, д. Симонянца.
(հ. կ.) 51. 50—33

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՍԱՆԱՏՕՐԻԱ ՊԵԱՏԻԳՕՐՍԿՈՒՄ
Դ-r Մ. Ս. ԳՈՒՐԵՎԻՉԻ
Ջղային, ներքին և կանանց հիւանդութիւններ։ Գեղեցիկ վայր։ Ցարմար կարգաւորութիւն։ Ժուժկալական ճաշ։ Բժշկութեան ֆիզիք. մէտօդներ (էլեկտր., մասսաժ, մարմնամարզ., բժշկութիւն Ֆրէնկելի սիստեմով՝ քայքայված ջղերի—աղային, ցեխային, ածխաթթուատային վաննաներ. Նարզանի և արեգակնային վաննաներ)։ Սէզօնը՝ մայիսի 1-ից մինչև սեպտ. 15-ը։ Վճարը՝ թէ բժշկվելու և թէ ապրուստի համար՝ ամսական 150 ր.։ Վաղօրօք գրվել ընդունվում է։ Տեղեկութ. և ծրագրի մասին դիմել մինչև ապրիլի 15-ը՝ Москва, Кузнецкій мостъ, № 15, д.-ру М. С. Гуревичу. Ապրիլի 15-ից յետոյ՝ Пятигорскъ, Санаторій Гуревича.
(М. 129869) 337. 1—1



Ա. ՄՕԶԷՐ
Ժամացոյցների խոշոր ֆաբրիկանտ, աշխարհիս յայտնի Ա. Մօզէրը իր ֆաբրիկայից բաց չէ թողնում չը ստուգված ժամացոյցներ։ Ա. ՄՕԶԷՐԸ ծառայում է իբրև ամենալաւ երաշխաւորութիւն ժամացոյցների յատկութեան, ամրութեան և ճշդութեան։ Ա. ՄՕԶԷՐԻ ԺԱՄԱՑՈՅՑԸ, սև պողպ., տղամարդկ., բաց, շատ տափակ (արծաթի րուբլու չափ), ֆանտաստ. ցիֆերբլ., լարելը առանց բանալիի, րէմօնտուարը 15 քարի վրա, ձևը նոր տեսակի, շքեղ—12 րուբլու փոխար. ՄԻԱՅՆ 3 ր. 25 կ., 2 հատը—6 րուբ.։ Կանանց ժամ., բաց՝ 4 ր.։ Ճանապարհածախսը 1—4 հատի համար 40 կ., Սիբիր՝ 75 կ.։ Պատուէրները կատարվում են վերադիր վճ. և առանց կանխավճ.։ Շքեղ շղթաներ, նորաձև ոսկուց, բրէլօկով—հատը 75 կ. և 1 ր. 50 կ., երկարը՝ 2 ր. 50 կ. և 3 ր. 50 կ.։ Հասցէն՝ Т—во «Патентъ» Варшава, Св. Креста № 48. Отдѣл. 23. Նախազգուշութիւն. Պ. պ. գնողների ուշադրութիւնն ենք դարձնում, որ մօզէրեան իսկական ժամացոյցներն են Ա. ՄՕԶԷՐ։
(19,26,մ.4.) (В. 26254) 329. 3—2

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — „MESSAGERIES MARITIMES"
5 (18 մայիսի ըստ ն. տ.) մայիսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Danube" շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։
Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրկ և Շանխայ (Չինաստան), Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում, պակասեցրած գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում՝ թիւ 127 գրասենեակը, հեռախօս թիւ. 608։ Գրասենեակը բաց է՝ 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, ամեն օր, բացի կիրակի օրերից։

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ
Ի նկատի ունենալով, որ վաճառքի է հանված առողջութեան համար վնասակար կեղծ Սպերմին, որ առաջարկվում է զանազան անունների տակ, անհրաժեշտ է գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել հետևեալ անուան վրա՝
ՍՊԵՐՄԻՆ ՊԷԼԻ
ՊՐՕՖԵՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ
SPERMINUM POEHL
1901
և պահանջել այդպիսին Գործարանաբուժական Ճեմարանի իսկական կապոցի մէջ,
ՊՐՕՖԵՍՍՕՐ-ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ և ՈՐԴԻՔ, ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ։
Ռուսական և արտասահմանեան գրականութեան մէջ եղած բազմաթիւ գիտական դիտողութիւնները առաջնակարգ գիտնականների և բժիշկների կողմից՝ սպերմինի փրկարար ներգործութեան մասին—նեվրաստէնիա, սեռական թուլութիւն, ծերութիւն, իստէրիա, նեվրալգիա, արեան պակասութիւն, թոքախտ, սիֆիլիս, սնդիկային թմըրութեան հետեւանքներ, յօդացաւ, սրտի հիւանդութիւններ (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բաբախումն, պերեբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումն, ալկօհօլիզմ, ողնաշարի հիւանդութիւն, կաթուածներ, հիւանդութիւններից թուլացումն, յոգնածութիւն և այլ հիւանդութիւններ ունեցած ժամանակ—
ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԷՍ ՊՐՕՖ.-ԴՕԿՏ. ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԻՆ։
ՊԷԼԻ ՍՊԵՐՄԻՆԸ ծախվում է բոլոր դեղատներում և դեղամթերային խանութներում. 1) կաթիլների ձևով (Essentia Spermini—Poehl), 1 սրուակը—3 ր., և նոյնպէս՝ 2) ամպուլլաների մէջ մորթու տակ սրսկելու համար (Sperminum-Poehl pro injectione), 1 արկղիկը—4 անգամ սրսկելու համար—3 ր., և 3] կլիզմի համար [Sperminum-Poehl pro clysm), 1 արկղիկը—4 կլիզմի համար—3 րուբլի։
Ձրիաբար ուղարկվում է «Цѣлебное дѣйствіе Спермина-Пеля» գիրքը (102 էջ), որ պարունակում է ռուս և այլազգի բժիշկների դիտողութիւնները, նոյնպէս և «Органотерапевтическій Сборникъ» երկրորդ հրատար. գիրքը՝ պրօֆեսսոր-դօկ. Պէլի ցուցմունքներով գործարանային ուրիշ կազմ. վերաբերմամբ։
Ըստ պահանջման պ. պ. բժիշկների ուղարկվում է գիտական յատուկ գրականութիւն։
ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ, ХИМИЧЕСКАЯ ЛАБОРАТОРІЯ И АПТЕКА
Профессора Доктора ПЕЛЯ и Сыновей
въ С.-ПЕТЕРБУРГѢ, Вас. Остр., 7 линія д. № 28—267.
Ամենախոշոր մրցանակներ «Grande-Prix» աշխարհիս բոլոր ցուցահանդէսներում և ամենալաւ գովասանքներ բժշկականութեան մէջ գործող հեղ. անձերի։
(12, 26. մայ. 10, 24) (П. 57666) 279. М. 4392. 4—2

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1897 թ.
1888
1908 թ.
Անդրկովկասեան ֆաբրիկային պահեստը
Թիֆլիս, Սօլօլակսկայա փող., № 4.
Առաջարկում է շինութիւնների կառուցման նիւթերին
„ՊՐՕՎՕԴՆԻԿ-ԼԻՆՕԼԷՈՒՄ"
ԱՄԵՆԱԼԱՒ ԾԱԾԿՈՑԸ ՅԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԼԻՆՕԼԷՈՒՄԸ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ է պարկետին, յատակները ներկելուն, մօզայիկներին, գորգերին, դօրօժկաներին, կլէօնկաներին և այլն։
ԼԻՆՕԼԷՈՒՄԸ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ է յատակը ծածկելու ուրիշ միջոցներից նրանով, որ պահպանում է յատակը խոնաւութիւնից և ցրտից, անթափանցիկ է, փոշի չէ առաջացնում, հեղուկներից չէ փչանում, ոտների ձայնը խլացնում է, շուտ է մաքրվում և ընդմիշտ գեղեցիկ է մնում։
ԼԻՆՕԼԷՈՒՄԸ, ՈՐՊԷՍ ԷԺԱՆ ԾԱԾԿՈՑ ամրութեան, յարմարութեան գեղեցկութեան կողմից միանգամայն առաջին տեղն է բռնում մինչև օրս գոյութիւն ունեցող ծածկոցների շարքում, որի համար վկայում են «Պրօվօդնիկ» Ընկերութեան ստացած պարգևները և գովասանական թղթերը, ինչպէս ռուսաց, այնպէս և արտասահմանեան ցուցահանդէսներում։
ԼԻՆՕԼԷՈՒՄԻ նախահաշիւը և նկարները ուղարկվում են ըստ առաջին պահանջման։
(հ. կ.) 284. 8—7

Электропечатня Н. Г. Аганьянцъ
Полицейская 7.